ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 279-Ա

ԱՐՇԱԿ ՅՈՒՐԻԻ ԽՈՒԴԱԴՅԱՆԻՆ, ՆԱՐԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-112-0004-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, հիմք ընդունելով Արշակ Յուրիի Խուդադյանի դիմումը, անձնագրի պատճեները, սեփականության իրավունքի N 2793017 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Օձուն բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 13.01.2025թ. տրված N 89 տեղեկանքը՝

որոշում եմ.

1.Օրինականացնել Արշակ Յուրիի Խուդադյանին և Նարինե Ռազմիկի Կոստանդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 12-րդ փողոց, 10 հասցեում գտնվող, 06-112-0004-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.12911 հա մակերեսով հողամասում, 2016թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2024XYLV4T ծածկագրով հաշվառված, 89.6 քմ արտաքին մակերեսով (77.3 քմ ներքին մակերեսով) անավարտ շինությունը , ընդհանուր 81.8 քմ արտաքին մակերեսով (74.7 քմ ներքին մակերեսով) օժանդակ շինությունները՝ մառանը, սանհանգույցը, պարիսպը:

2. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Օրինականացված անավարտ շինության համար սահմանված 78310 (յոթանասունութ հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամ և օժանդակ շինությունների համար սահմանված 42896 (քառասուներկու հազար ութ հարյուր իննսունվեց) արժեքով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4 .Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի